

# Ս. ԵՓՐԵՄԻ «ԿՑՈՒՐԴ»ՆԵՐԸ

Սուրբ տարւոյս իբրև կնիք և հուսկ յուշիկ «Կցորդք»էն լաւագոյն բան չէի կարող ձօնել ընթերցողաց: Որպէսզի ասոնք իրենց ողբական մեղամաղձիկ շեշտով՝ խռովեն միշտ մեր սիրտը և արթուն պահեն զայն երկնաւոր Փեսային: Արդէն մեր սուրբ Հայրերն ալ իրենց սրբութիւնն ու գիտութիւնը՝ ասկից ուսեր են, ասկից ծծեր են և մներ:

**ՀԵՂԻՆԱԿԸ.** — Անապատի ճգնաւոր մ'է խօսողը, միանգամայն արշալոյսի շառաւիղներով պսակազարդ բանաստեղծ մը: Անտիոքեան դպրոցի դրութեան կը հետեւի, շօշափելի և զգայացունց դարձնելով իմաստները, ուր ընդհակառակն, Աղեքսանդրեան (Նոր-պղատոնական) դպրոցը կը ջանար միշտ այլաբանական ոճով մեկնել ամէն բան: Եփրեմի յատուկ տրամանուշ և յուզիչ քնարերգութիւն մ'է հրատարակածս, աւերակաց այդ քաջահնչակ սարեկին հոգևովը թաթաղուն: Խոր և բարեպաշտ զգացում, պաղատական ու յաւէտ ջերմեռանդն ոճ: Հակիրճ է՝ բայց ազդու: Կենդանի պատկերներով ու գոյներով, իր վառ ու բնական նկարագիրներով՝ գրեթէ անմրցելի: Զգիչ ու ներշնչող են ճառերս, որով կարողալ ու լսուելու հաճելի:

**ՆԻԻԹԸ.** — Ապաշխարութեան և Ս. Հաղորդութեան վրայ կտրուկ յորդորներ են, որոնք նիւթական կերակուրէն՝ կամաց կամաց մարդուս միտքը դէպ ի գեղազոյն կերակուրը, հոգւոյ և մտքի անմահ մնունդը կը բարձրացնեն: Կը թուի՝ Մեծ պահոց առթիւ ըսած ըլլայ զասոնք: Թուով յիսունեւմէկ հատ ըլլալին՝ ենթադրութեանս բաւական փաստ է, որոնց մէկ երկուքը յարութեան ճառեր են: ԿՑՈՒՐԴ անունն ալ՝ կարծել կու տայ, թէ առարկայաշատ ընթերցուածոց՝ իբր կցուած

խորատներ կամ Յարասութիւններ են: Անոր համար յիշատակարանն ալ կը կոչէ զասոնք կցորդք Ասացուածք:

**ՀԱՏԸՆՏԻՐ.** — Հոս մի քանին միայն իբր նմոյշ պիտի դնեմ, իսկ ամբողջութեամբ առաջին անգամ ի լոյս ընծայեցի Սոփերաց ԻԳ հատորիկով:

Աշխոյժ ու նուրբ գրչի արդիւնք են Եղիայի և ազոաւուց նուիրուած (ԺԸ-ԺԹ) կցուրդք: Ոչ նուազ արուեստով գրուած է՝ այրի կնոջ իւր բազմացնելու դրուագը (Կց. Ի): Առածի ձեւով հիւսուած ու զորմութեան յորդորն ալ (ԻԲ-ԻԶ) շատ տպաւորիչ է: Զակէտսի դարձին պատմութիւնը (ԻԵ-ԻԷ), և Արրահամու հիւրասիրութեան նկարագիրը՝ (ԼԲ-ԼԳ), սովորականէն աւելի ճարտար գրիչ մը կը յայտնեն: Գեղեցիկ են, յուզիչ ու նուրբ ճաշակի փափուկ արգասիք՝ Փրկչին հաց բազմացնելու և հիւանդները բժշկելու (ԺԷ, ԼԸ) սիրուն դրուագները: Վառ երեւակայութեան ծնունդ են հրաշալի ձկնորսութեան (ԼԹ-Խ) կցուրդները: Յիսուսի և Մովսիսի բաղդատութիւնը (Կց. ԽԳ) աստուածաբանական և իմաստասիրական նուրբ տեսութիւններ են: Սուրբ Հաղորդութեան նուիրուած (ԽԷ-ԽԱ) ճառերը, խորաթափանց վարդապետութեան հետ, բանաստեղծական վեհ թոհիչք, և մեծ հանճարի ազնիւ խոյանքներ ունին:

Էջերուս մէջ արտատպուածները թող բաւական ըլլան սոյն երկիս վրայ որոշ գաղափար մը կազմելու, և թերի մասանց կորուստին ծանրութիւնը կշռելու:

**ԶԵՆԱԳԻՐՔ.** — Ս. Եփրեմի երկերուն մէջ դեռ անձանօթ էին: Ասորերէն բնագրին, ինչպէս յոյն ու լատին հին թարգմանութեանց մէջ՝ չկան: Ասեմանեայ վեց հատորնոց եռալեզու հմտալից և ընդար-

ձակ հաւաքածոյին մէջ ալ, (տպ. Հոովմ 1732-1746), չեն յիշուած: Բայց այդ պէտք չէ կասկածիլ տայ մեզ իրենց հարազատութեան մասին: Իրենց արտաքինը, շարադրութիւնը, ձեւերն ու դարձուածքները բոլոր, ասորի ծագում կը ցուցնեն: Ընդհանուր արուեստն ու օճումը որով զրոյժուած են, հեղինակը կը մատնեն: Եփրեմի ծանօթ մատենագրութեան նոյն շունչն ու սարասը կը կրեն:

Կցուրդներու գրչագիր օրինակներն ալ բնագրէն աւելի փայլուն բախտի չեն հանդիպած: Մէկ ձեռագիր միայն կայ էջմիածնի մէջ, թղթեայ, ԺԳ դարուն, թիւ 902: Տէր Պողոս վարդապետ Պետրոսեան՝ Միաբանութեանս բարեկամ, մեծ դժուարութեամբ 1849ին գաղափարած է, և 1851ին մերոց ձեռքով՝ Կ. Պոլսէն վանք կը ղրկուի, որուն հաւատարիմ և ճիշտ նմանն առնելէն վերջ՝ տիրոջը՝ կը դարձնեն: Գրատանս մէջ այժմ կը կրէ Գ. Չ, 769 թիւը: Վիեննայի օրինակն ալ (թ. 257) մերինէն առնուած է:

**ՊԱԿԱՍԱՒՈՐ.** — Ոչ քիչ մասանց ըզգալի թերին, արժանապէս մեզ աւարել կու տայ զանոնք: Որովհետեւ բանասէրն ու հոգեսէր, բանաստեղծն ու հայկարան, ամենքն ալ առատ մնունդ ու ճարակ կը գտնեն գրութեանս մէջ: Արդէն մեզմէ 338 տարի առաջ, կազմարար մը գուժած է, թէ « Ոչ կարացար գտանել զպակասն սորա » ( էջ տպ. 14 ). որով՝ կորուստն անդարմանելի կը դառնայ: Սակայն այդ պակասը թերթից անկման հետ՝ աւելի կնճոտ է դարձած հին կազմի մը շփոթութենէն: Ըսածս յայտնի կը տեսնուի ի՞նչ և Լ կցուրդներէն: Առաջինը, իբր թերի, անվերնագիր՝ կը սկսէր... ինձոցն. 2-3 թուղթ յետոյ՝ երկրորդը (Լ) կ'աւարտէր՝ « և ոչխարս առ... »: Արդ, զլուսններու կարգը փոխելով՝ կը գտնենք, որ ոչ միայն բառերը յարմարապէս կը զօղուին, այլ նաեւ իմաստն աւելի կանոնաւոր ընթացք կ'առնու: Ուստի այն երկու զլսոց կարգը շրջեցի:

**ՀԱՏՈՒԱԾՆԵՐ.** — Հայկազեանս յայնպէս էջ 135, « Արդ ուտէ. զմարմինս

զրքի շնորհիւ, կարելի եղաւ երեք մաս գտնել և յարմար տեղերը դնել: Առաջինն է « Վասն քնոյ և Արթնութեան » . Երկրորդը՝ « Վասն հակողաց » ( էջ տպ. 15-22 ): Երրորդն է Խ կցուրդն ամբողջ, որմէ օրինակիս պակաս մասը բովանդակեցի, ( էջ 106-107 ): Հատուածներս կան մեր Գ ձառնարկին մէջ գրուած Երուսաղէմ (1637), էջ 478-81, և էջ 804-5. մատենադարանիս է, զ, 512 թուով:

Սակայն սկիզբէն դեռ 13-14 զլուսկ կամ կցուրդ պակաս կը մնայ: Նոյնպէս ԺԶ, ԻԷ, ԻԸ, ԻԹ, Լ, ԼԷ, Խ, ԽԳ-ԽԻ և ԽԹ կցուրդները՝ թերի են և բոլորովին անկարկատելի պիտի մնան, մինչեւ հայրենասէր ուսումնասիրի մը օրհնեալ ձեռքը՝ էջմիածնի, Երուսաղեմայ եւ ուրիշ ճոխ մատենադարաններու անդրագոյն պրպտումներով, նոր լոյս մը կարենայ սրփոել: Ծառնարաց մէջ հեղինակին անունը կրող ճառերու միջեւ կարծեմ դիւրաւ կարելի պիտի ըլլայ ցիր ու ցան հատուկտորներ գտնել. զոր կը յանձնարարեմ ընթերցողաց յատուկ ուշադրութեան:

**ԼԵԶՈՒՆ.** — Նորատիպ ճառերուս թարգմանութիւնն ու լեզուն, ասորի բնազրոյժն ունենալով հանդերձ, շատ ընտիր է և առանց դժուարութեան կարելի է ըսել Ոսկեզարու գործ: Շատ հաւանական է որ Եղիշէն այդ գիրքը հայերէն կարդացած ըլլայ: Հայկազեան բոգ. « ծակտուած » բառը, միայն Եղիշէն կը կոչէ. արդ նոյն բառը համագոր նախադասութեամբ կը գտնենք հոս ( էջ 138 ): Հետեւաբար Եղիշէի Ը յեղանակին ծանօթ էին կցորդք:

**ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ.** — Զեռագիրս Հայկազեանի տպագրութենէն վերջ եկած է մեզի, ուստի հարկ է լուսարանել նախ ինչ ինչ ՄՈՒԹ կէտեր. — տպ. էջ 46 ունի Հոշայ, որ է՝ Գուսի (Արաքսի): Էջ 67, 70 « Հարեփրայ », որ է՝ Սարեփթայ: Էջ 100-101 « Դոյզն ինչ էր ուրախութիւն ձկանցն որ ի Փրկչին մեր ». իմա, Դոյզն ինչ էր ուրախութիւն ևոցս որ ի վերայ ձկանցն՝ քան զայն որ ի Փրկչին մեր:



Որդւոյ, զՀաց կենդանի ուտէ»։ Իմա՛, Որ ուտէ եւն. : Էջ 137, « հուր որ ուտէր զզոհս նոցա »։ Իմա՛, հուր էր եւն. : Էջ 111, « Իբրեւ չիքն որ նեղէր ի կոսպաշտեան »։ որ է՛ Եւ իբրեւ չգոյր ոք որ նեղէր : Դարձեալ էջ 38, « Ո՞վ ասասցէ թէ զմարգարէս կերակրէր Աքաար թագաւոր, թէպէտ և նոքա կերակրիցին »։ Անշուշտ նորան մարգարէները չի նշանակեր : Առաջուց ագուուուց վրայ խօսած էր, ուստի հոս ալ կարծեմ զանոնք կ'ուզէ ակնարկել : Տարբեր ձեւով կարելի է բացատրել այդ նախադասութիւնը : Նմանապէս խրթին է էջ 135, « Ձի որպէս հանգուցեալն ընդ աջմէ՛ հանգիցուք, և խորհուրդքս մեր, զի յոյժ սիրեաց զմարդկութիւն նորա », իմա՛ հանգիցե (կամ - գիցե) և խորհուրդքս մեր, զի յոյժ սիրեաց կամ - բեցին) զմարդկութիւն նորա : Մեկնութիւնս նախորդներէն կը հետեւի :

Ոչ նուազ մեկնութեան կարօտ է այս. էջ 60, « թէ հրեշտակք գոհանան՝ որ ոչ աշխատեն զարարածս որ պաշտեն, արարածք զիմորդ լուսեցեն յօրհնութենէ »։ Թերեւս ըսել կ'ուզէ. Եթէ հրեշտակք որ պաշտեն զարարածս զորս ոչ աշխատեն՝ (= աշխատ առնեն) գոհանան զԱստուծոյ, արարածք (նողեղեք, կիւրակակր) զիմորդ լուսեցեն յօրհնութենէ : Գիտենք թէ հրեշտակք մարդոց կը ծառայեն, և երկրորդ, այս զբքին մէջ Ուղղական ու Հայցական հոլովները փոխանակաւ գործածելը սովորական է, ինչպէս քերական մասին մէջ յետոյ պիտի տեսնենք : Որով լուսաբանութիւնս յուսամ տրամաբանական ըլլայ : էջ 21 « Սկեսցուք ըստ կարի մերում, ապա թէ ոչ՝ քան զկար մեր » : Իմա՛, եթէ հոս մեր կրցածին չափ չհրակենք, հանդերձելոյն մէջ մեր կրցածէն աւելի պիտի տուժենք :

Բաւական դժուարին է նաեւ էջ 86, « Նայեաց և իսահակ որչափ վշտացաւ ի ժամու զի օրհնեաց նա զորդի իւր. և իբրեւ Յակոբու էին օրհնութիւնքն, վշտիս արգել զնոսս է Սառայ : Այսպէս է մեր ձեռագիր օրինակը, եւ կը համարիմ հաւատարիմ

ըլլայ : Վերջին մասը, վշտիս եւն., շատ մութ է : Ինչ կապ ունի Սառայ Յակովբայ օրհնութեան հետ : Արդեօք Յակովբով կ'իմանայ իսրայելի ցեղը, և «արգել ըզնոսս» յովը՝ իսմայելի ցեղը զոր իրօք Սառայ բարկութեամբ արգելեց՝ վտարել տալով : Կամ ընդարձակ իմաստով բոլոր իսրայելացուց թշնամիները, որոնց մէջ նաեւ Եսաւի ապագայ սերունդները : Իսկ այն էն ինչ է : Իբրեւ բայ՝ հոս բոլորովին անիմաստ է : Թերեւս բնագրին մէջ « Եւ » եղած ըլլայ, ուր գրիչը 2 մոռնալով՝ Եւ միայն մնացած է : Եւ յաջորդ գրիչը է կարգացած ու շինած է : Եւր Սառայի և իսմայելի կամ Ագարայ պատմութեան հետ աւելի յարմար է, և տուած նշանակութիւնս կ'արդարացնէ : Այսու հանդերձ իմաստը դեռ շատ անորոշ կը մնայ : էջ 45, « Ձի զերծաւ նա ի մահուանէ՛ որսացաւ զմանուկն ընդ նորա » : Իմա՛, մահն որսացաւ զ... :

Այս նախադասութիւնն ալ, էջ 78, « Եւ ծնունդ Սառայի, ոչ ինչ ետ՝ այլ աղքատսիրութիւնն », այսպէս պարզելի և հասկնալի է. Ո՛չ ինչ ետ ծնունդ Սառայի՛ այլ (= բայց երէ) աղքատսիրութիւնն :

Ասոնք են զլիաւոր մութ կէտերը : ԴՏՈՂՈՒԹԵԱՆ արժանի են նաեւ աւսոնք. էջ 40-41, Եղիսէ՛ այրի կնոջ իւղը բազմացնելու համար նախ ամանները ջրով լեցնել կու տայ, ինչ որ Աստուծուն չի մէջ չկայ : Նոյնպէս, էջ 49 « գրախ » բառը կը գործածէ զբամազլուխի իմաստով. « Ո՛նիւթ որ ժամանակեան է եւ շահ իւր յաւիտենից : Աստ մնայ գրախ, և վարձ նորա յղարկի ընդ մեզ » : Դարձեալ, էջ 41 եւն. ունի մեշտ կո, աշխարհաբարի ձեւով : էջ 26 « Ինչ որ անօգուտ է », զուտ աշխարհաբարի ոճ է : Ստոյգ բառը էջ 42 և այլուր արդար, սուրբ իմաստով կը գործածէ : Հետաքրքրական է նաեւ այս, էջ 106 « Որ ոք ծարաւէր, երթայր ընկր ի ծովն և գայր բազմէր » : Ծովու ջուրը չի խմուիր. բայց հոս Տիրեբեայ ծովակին վրայ է խօսքը, զոր Ղ. Բ., 23, յի՞մ կ'անուանէ, որու ջուրն ալ

ինչպէս գիտենք անոյշ է, ուստի և ըմպելի : ԱՆՍՈՎՈՐ ձեւեր են, էջ 103, Գաղցրեալ որ է ըսել՝ քաղցեալ, զոր չփոխեցի : Նոյնը կրկնուած կը տեսնենք էջ 62ի մէջ « Երուսցէ զքաղցրութիւն արտաքնոց » : Երկրորդութեան տեղի չտալու համար՝ ուղղեցի : էջ 61, « Մի՛ քրիստեացեալ զինչս կարօտելոց » . հոս որոշ կերպով զրկել, պակսեցնել, կտրել ըսել է : Նոյնպէս էջ 86, « Ձի եթէ սրբեալ էր յայպան » : Այսին, սովորաբար չի հոլովուիր. հոս նախորդի վերջահոլով տրական է, և կը նշանակէ « յայպանուս » : էջ 90, կերին. Ս. Գրքին մէջ և ամէն տեղ՝ միշտ կերակը կը գտնենք : էջ 93, « Ետ գետս տասն և երկուս » : Այս ձեւը մեր ընտիր մատենագրաց քով գործածական է. միշտ կը տեսնենք մետասան, երկուտասան, եւ տեսնենք մետասան, երկուտասան, եւրեքտասան եւն. կամ այսպէս աժ, բժ, զժ, թժ եւն. : Այս կերպն աւելի տրամաբանական է եւ բնական. որովհետեւ կ'ըսենք մե-տասան, երկու-տասան եւն., որով աւելի բնական է զնել նախ մի = ա, և յետոյ՝ տասն = ժ եւն. : Այս պարզ կանոնին դէմ մեծ հայկաբան մը տարբեր կերպով արտայայտուած է իւր ժամանակին, որուն հմտութիւնը յարգելով հանդերձ՝ համաձայն չեմ, քանի որ հնութեամբ ու թուով ոչ քիչ ձեռագիրք պաշտպանածս կը հաստատեն :

ՆՈՐ ԲԱՌԵՐ են. էջ 26, Տարտակն = տաղտկացող : 27, Անդատեմ = աստանդեմ : 44, Միակիւն = միածին, միամօր : 51, Գանգալ = գանգատիմ, քանքար : տամ : 117, Պատուաւ = պատիւ առնող, ընդունող : 122, Ժակկեի = առժամանակեայ, ո՛չ մշտնջենաւոր : 130, Թերացումն = մաս մը, ոչ ամբողջութեամբ : 135, Ի յոչանակաց = ծոյլ կերպով, ծուլութեամբ : 137, Խոհակերումն = խոհանոցի մէջ եփուել : 120, Անտուայտուրիւն = անչարչարելի, որ չի կրեր : 92, Կոխմ = կոտիմ, փակչիւ, կպչիւ (փոշուոյն) ոտքի, զգեստի եւն. : 96, Յողորդեմ = յաղթել, զօրանալ մէկու մը վրայ : Ասոնք ամենքն ալ Հայկազեանի մէջ կը

պակսին : Նոյնպէս, 18, Հսկայուն = արթուն, հսկող : Հայկազեան բոգ. կը մեկնէ նսկայազունք, հսկայք. բայց ոչ : Հոն խօսքը քնոյ և արթնութեան վրայ է, և նսկայազունք իմաստ մը չի տար : 57, Փոխորդ, կայ Հայկո. ի մէջ բայց տարբեր իմաստով, հոս ըսել է պարտապան : 64, Փոխըլանամ եւս կայ, սակայն յետին դարու հեղինակներէն : 66, ունի յարաց բառ մը, որ հաւանաբար խանգարուած է, քանի որ այն էջին բոլոր բառերը կտրտուած են : 99, կայ քափեմ՝ սթափելու իմաստով, զոր Գ. Ճառնտիրն արդէն սրափեցիկ կը գրէ : Սակայն չփոխեցի : էջ 99, մեր օրինակն ունի զաշխարհի, եւ լուսանցքին վրայ մատիտով նշանակած է զօրապին : Նոյն զլուխը Գ Ճառնտիր մէջ զօրապանի կը դնէ, և ըստ այնմ սրբագրեցի : Այսպէս ուրիշ քանի մը բառ եւս թիւրիմացութեան տեղի չտալու համար՝ հարկ եղաւ :

ՈՒՂՂԵԼ. Նախ, էջ 16, « Յայել հաւաւ ի վերայ նորա » . ուղղ. յարեաւ : Հայերէն սովորական ոճ է : էջ 31, « մինչեւ խորհեալ էր (Եղիա). ուղղեցի՛ մենչեւ : էջ 53, « Ծագեաց ի զաւակէ (Աբրահամու) երրորդ Աստուածութենէն. ուղղեցի՛ Երկրորդ : Որովհետեւ Աբրահամու զաւակ՝ Քրիստոս, Ս. Երրորդութեան Երկրորդ անձը եղաւ : Իսկ Երրորդ անձին, Ս. Հոգւոյն՝ ծնեալ ըսելն անգամ մոլորութիւն է. անոր համար սրբագրեցի : Դարձեալ էջ 115, « Ձլացան ոմանք յուսմանց ըզմարդկութիւն (Քրիստոսի). ուղղ. յանուսմանց, որ է՛ տգէտներէն ոմանք : Նոյն բառը գործածեր է նաեւ էջ 102 և հոս (115) քիչ մ'առաջ : Այս եւս անհրաժեշտ փոփոխութիւն է : էջ 87, « որ ըմպէ զնա » . միայն ր գրուած է. ուղղեցի ըստ իմաստին : էջ 110, հանգեաւ ժողովուրդն յաղեաւոյ = յաղեօտոյ. ուղղ. յաղիւսոյ : Միւսը շատ անսովոր ձեւ է. և խորթ : էջ 111, « Ի ժամու աշխատութեամբ առաջի որթուցն կորանային » . ուղղ. աշխատուցաւ տեսնայն յամանս » . ուղղ. « մանա-

նայն» : Նմանապէս հոն , էջ 111, « եւ իբրեւ զլացողը եղեն՝ որ փոխեաց զխոստումն իւր որ առ ծառայս իւր » . ուղղ. « ոչ փոխեաց » :

Նոյնպէս այդ բոլոր ձեւերը, Աքայար, երկոյտասան , որդոյ, սարէն, ժառանկեմ, մանգամբ, պահանջադարձն եւն. , ամբողջն ալ փոխած եմ միշտ կանոնաւոր կերպի, Աստուածաշունչի և ուրիշ ընտիր մատենազրաց ոճով . պահանջողքն, մանկամբ, ժառանգեմ, որդոյ եւն. :

Քերական խոտորումներն ալ բազմաթիւ են : Յաճախ ունի Հայցական հոլովն Ողորդականի տեղ . օրինակի համար . էջ 41 ունի « զամանն... շրջեցաւ » : էջ 17, « Առաւ ի նմանէ գեղարդն... և զկեանսն : էջ 67, « Խնդրեաց զնա ջուր : Հոն, « Խնդրեաց զնա հաց » : էջ 70, « Ասաց զնա խնդալով » : էջ 58, « զաղբատ յափշտակեալքն առին զատացուածս » . իմա՛ աղբատ յփշտակ : կիտաղորութիւնը փոխելով՝ իմաստն աւելի որոշ կ'ըլլայ, և զարտուղութիւնը նուազ զգալի կը մնայ : Այսպէս . « Չարմանք էր տեսանելի տան Չակքէի, զյափշտակեալսն զայնս և զաղբատ յափշտակեալքն . առին զատացուածս իւրեանց, և աղբատքն ըզդարմանս իւրեանց » : Դարձեալ, էջ 73, « Քաղցնուին աչք նոցա զշուքն » : էջ 79, « յանիծանելն զՆոյի զՔանան » : էջ 19, « կայ և մնայ վարձան » :

Ուղղական հոլով՝ փոխանակ Հայցականի . էջ 58, « Չարմանք էր տեսանելի տան Չակքէի » : էջ 17, « Մարգարէացան նմա յաղթութիւնք, և պատահեաց նոցա պարտութիւնք » . իմա՛ յաղթութիւնս . . . պարտութիւնս : էջ 18, « Առաւ ի նմանէ... տէգն իւր, և զկեանսն որ... շնորհաւ ետ նմա Դաւիթ » . իմա՛ զոր... : էջ 49,

« Զի բարեւազին տրովք իւրովք քաւէր նա » . իմա՛ զբարեւազին տրովք իւրովք եւն. :

Եզակին՝ յոգնականի տեղ . էջ 17, « Արթունք... ի ձայն փողոյն ընդոստեաւ և զարթեաւ » : էջ 77, « գեղն զոր ստացաւ երեսը նորա » . իմա՛ ստացան : Նոյնպէս, էջ 56, « ալամբ է գեղեցկութիւնք » : էջ 79, « Քանի՛ տգեղ է զի հարկանիցի հոտ գինւոյն ի բերանոց նորա » . իմա՛ նոցա : էջ 39, « իբրեւ ոչ մնացին նորա ժառանգութիւն » . իմա՛ մնաց, կամ ժառանգութիւնք :

Դարձեալ կը գրէ էջ 92, « լիցի վարձն ըստ այնորիկ » . իմա՛ այնմիկ : էջ 92, « Միխիթարես շինան նորա » . սովորաբար՝ նմա : էջ 130, « աջն գրգիլ ի ջանէ » . իմա՛ յաջն : էջ 134, « Յայսմ աշխարհի և արքայութեան » . իմա՛ յարքայութեան : էջ 23, « ուրախութիւն՝ որ զայ զեղջ » . իմա՛ յոր = որով... : Նոյնպէս սովորական չէ, էջ 36, « յաւել եմուտ » փոխանակ՝ յաւել մտանել : էջ 92, « չեւ ջընջեաց » սովորաբար՝ չեւ ջնջեալ :

Այսչափ մանրամասնութենէ վերջ, հարկ է սակայն յաւելուլ, որ այդ բոլոր զարտուղութիւնները, ոչ եթէ հայերենի օրէնք մը կը ներկայացնեն, այլ շատ անգամ գրչի անհմտութենէն յառաջ եկած : Հայցական հոլովի զեղծումը, կարծեմ ասորական բնագրին եւ բուն թարգմանչին վերագրելի է քան օրինակողին : Արդէն Գ Ճառընտրին մէջ գտնուած գլուխը բաւական տարբերութիւններ ունի որոնք աւելի տրամաբանական եւս են : Այսու աւելի կ'ըմբռնենք, թէ բնագրին ու հայ ձեռագրաց կորուստը, մատենագրութեան ու հայրախօսութեան որքան ծանր է :

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

### ՍՈՒՐԲ ԵՓՐԵՍԻ « ԿՑՈՒՐԴ » - ԶԱՏՈՒԱԾՆԵՐ

#### ԿՑՈՒՐԴ ԺԸ.

Օրհնեալ Տէր եւ անդրանիկն, որ կերակրէ զամենայն ակնարկելով կամաց իւրոց

Օրհնեալ Տէր հոգաբարձու քաղցիւոց որ ընդ չորս կողմանս, զի ուստի ոչ ակն ունի՝ անտի պատրաստի նմա կերակուր : Ո՛ր միտք կարծեցին երբեք եթէ ագուաւք կերակրեն զմարդ . և այսր որ ամենայնի դժուարին է՝ դիւրաւ գործեաց առ Նղիա : Իբրեւ ասաց ցնա Տէր իւր՝ Թէ Թագիր ի ձորն Քիւրիաթու, խորհեցաւ արդեօք՝ Թէ ո՞րերիցէ կերակուր յանապատն ահագին : Թերեւս կարծէր եթէ մանանայ բերիցէ նմա իբրեւ ժողովրդնա առանց կերակրոյ ի գլուխ լինին : Մինչ գեռ խորհէր վանայս սորիկ, կամ մինչչեւ խորհեալ էր, ասէր ցնա, Թէ ագուաւոց հրամայեցի կերակրել զքեզ : Իբրեւ ասացաւ այս Նղիայի, լուսն ագուաւք զպատգամս նորա : Ի ծննդենէ և ի սիրելոյ օտարացան՝ զի կերակրեցին զմարդարէն : Ագուաւք փախչողք ի մարդկանէ՝ համբուրեցան ընդ Նղիայի, զի ոչ միայն հաց բերցեն նմա՛ այլ զի լիցին նմա բանից ընկեր : Եւ զի անարգեաց զէն մարդարէն՝ և ել նա ի ձորն ահագին, ագուաւք օտարացան յանապատն, զի ցանկացան շինութեան մարդարէն : Անդ արարին բնակութիւն և արօտս . անդէն տածէին և ոչ փախչէին յերեսաց նորա, զի եղիցին նմա ի զբօսանս : Ի ժամու ճաշոյ ուտելոյ՝ երթային նոքա ստիպաւ, զի մին բերիցէ հաց ի բերան, և միւսն միս ի շրթունս իւր : Ի հասարակ աւուր՝ առ երկայի, զի հանգչի ամենայն թեւ ի վաստակոյ, նոքա աշխատէին հանդերձել ճաշ և ընթրիս մարդարէն : Եթէ վաստակէին և եթէ ոչ : Ի ժամու զի ժողովի թեւ, ի հասարակ աւուր՝ բերէին ճաշ, և երեկոյի՛ զընթրիս նորա : Թերեւս ոչ ինչ ճաշակէին, զի ուսան պահս նորոգապէս : Զի ի կերակրոյ նորա կարճեալ էին՝ յամենայն կերակրոց գտան օտարապաւ : Մին ունէր հաց ի բերան, և

միւսն միս յատամունս իւր . և ոչ զինչ կամ էր նոցին՝ գիտէին : Իբրեւ զնէին առ սեղան նորա զհացն և զմիսն, կային առ նմա մինչեւ ուտէր նա՛ զի կերիցեն ի նշխարաց նորա : Ի հացէ նորա ուտէին որչափ եղեւ ի ձորն Քորիաթու : Եւ նա՛ որ կերակրեաց ի Հարթաք զայրին, և զագուաւսն՝ ի ձորն Քորիաթու : Հոգաբարձուք մարդարէն՝ կարօտէին մարդարէն, զի ի նորա պատճառս կերակրեցան : Քաղցեալքն այն կերակրեցին զնա, և քաղցեալն դարձաւ զքաղցեալն կերակրեաց : Երկեաւ և փախեաւ ի մահուանէ, և կեցոյց զորդի այրոյն : Ի Օրհնեալ անդրանիկն որ զԹըռուսնս ած զկնի կամաց իւրոց, զի կերակրեցին զՆղիա, և կերակրեցին ի նմանէ :

#### ԿՑՈՒՐԴ ԺԹ.

Օրհնեալ Միստիկն որ ի պարգեռն նորս կերակրիս ամենայն արարածք

Աստուած որ կերակրեաց զծառայս իւր ագուաւոք որ յափշտակեն զայլոց, օրինակ էր մեծատանց զի նմանեցին թռչնոց : Զի կեցին ի ձեռս Նղիայի ագուաւք՝ այն որ կերակրեցին զնա . ի նոցայոյն տայր նոցա : Զի կէին ի նշխարէ ի նորա, որք վաստակեցին կերակրեցին ըզմարդարէն : Ոչ ստացաւ զհատուցն նոցա, ի ձորն յոր հանգուցին զնա՛ յաճախեաց ի նմին զհանգիստ նոցա : Կեանք խոտացեալք եթէ գոյին թռչնոց՝ անդ հատուցանէր նոցա . արդ զի այս աշխարհ եւեթ է նոցա՛ յայսմ աշխարհի հատոյց նոցա : Եթէ ագուաւք որ անվարձ էին, առին զհատուցումն ի մարդարէն, զմարդիկ որոց խոտացեալ է զհատուցումն, զի արդ զրկիցէ բարբարոն : Հաճեալ էր ընդ ձորն Նղիա, զի առանց հոգոց էր ի նմա : Սակաւ էր տիւ աղօթից նորա, և գիշերն ողջոյն խնդրուածոց : Աբաբա ի նմանէ հեռի էր, և Յեզաբել կին նորա՛ ի բացեայ էր : Ի հանգանակաց սուտ մարդարէն խնայեաց զնա անպատն . խաղ՝ աղօթքն էին նմա անդ, և ագուաւքն՝ ի զբօսանս : Հանգիստ

կատարեալ էր նմա, և զի մի աստանդեացին միտքն նորա՛ զագուաւսն ի զբօսանս առաքեաց նմա : Առնոյր ի բերանոյ նոցա զհացն և զմիսն զոր բերէին, և գնէր ընդ ատամամբք նոցա հաց և միս զոր նշխարէր : Արպէս համբուրեցան ընդ Աքամայ և Նոյի գազանք և Թռչունք, համբուրեալ էին ընդ Նղիայի ագուաւք պաշտօնեայք նորա : Ել ագուա ի տապանէն՝ և ոչ յաւել մտանել անդրէն, բայց սոքա հացիւ և մսով գային առ նա : Գիտեմ զի եթող զՆոյ մինչ գազանք և Թռչունք առ նմա էին, նոքա յարեցան առ մարդարէն իբրու միայնացաւն յամենայնէ : Նոյ որ կերակրէրն զնոսա հանապաղ՝ փախչել կամէին ի նմանէ . և զՆղիա նոքա կերակրէին՝ և ոչ թողոյին և փախչէին ի նմանէ : Ատեցին զէն որ ի տապանին, և սիրեցին զաւեր ջրհեղեղին . և նոքա առ տեցին զէն՝ և սիրեցին զաւեր ի բան ընկերութեան մարդարէն : Ագուաւ որ ոչ պահեաց զմիաբանութիւն ընդ ամուսնոյ իւրում՝ ի տապանին, այլ եթող զնա ընդվայր՝ և մոռացաւ, և ոչ յաւել եմուտ առ նա, կայր մնայր առ մարդարէն հանդարտութեամբ և ոչ եւս մեկնէր ի նմանէ : Ագուաւ որկորեայ և անողորմ՝ եղեւ կցորդ մարդարէն, կերակրել և դարմանել զնա : Զորն Քորիաթու արտեցոյց զՆղիա ջուրքքն որ ցամաքեցան . և զագուաւսն եւս տրամեցոյց զի միայնացան ի բան ընկերութենէ նորա : Իբրու գնաց անտի Նղիա, ագուաւքն բարբառով խնդրէին զնա . հայցէին զկերակուր նորա, և զընդելութիւն և զհամբոյր նորա : Թերեւս չոգան ըստ սովորութեան հասարակ աւուր և երեկորեայ՝ բերել, և զի ոչ գլուխն ըստ սովորութեան, դարձան անդրէն արտմութեամբ : Կամ արդեօք՝ և չոգան իսկ ոչ . զի անդրէն իբրու գնաց Նղիա՛ օտարացան ի հոգաբարձութենէն յորում էին նոքա առ Նղիայի : Մերկացան զէն մարդարէն՝ զի հոգացն զանձանց իւրեանց, որք ընդ իւրեանց և ընդ նորա հոգային : Գիշերի գնաց ի ժողովրդենէն, զի գուցէ տեսանիցեն և սպանանիցեն . գիշերի գնաց ի ծոր-

ճորոյն՝ զի մի տեսցեն ագուստին և արտակարգին: Չի առեցին զնա որդիք ազգի իւրոյ՝ ագուստին որդեկայք սիրեցին զնա: Եւ զի արտակարգ զնա ազատութիւն՝ գգուցին զնա թըռուցուք:

ԿՅՈՒՐԴ Ի.

Օրոնեալ որ ետ մեզ կերակոր ի դարձանի կարոտորեան մերոյ

Ագուստին որ կերակրեցին զԵղիա՝ ի ձեռն Եղիայի կերակրեցան, զի ետ վարձս նոցա՝ և կերակրեցան ի վաստակոց իւրեանց: Եբարայեցոց պակասեաց ջուր, և նոցա հաց նշխարեալ էր: Մարգարէք՝ հացի քաղցեալ էին, և ագուստին միս մթերէր: Եւ զի հալածեաց Յեզարէլ զմարգարէսն, և կերակրեաց զնոսա ի տանէ իւրմէ:

Ո՞վ ասացէ թէ զմարգարէս կերակրէր Աքաթը թագաւոր, թէ պէտք և նոքա կերակրեցին: Չի չէր դիտակ այնմ որ գործեաց Աքաթը առ հարիւր մարգարէսն. զի նա կերակրեաց զմարգարէսն ուստի ահն ոչ ունէին: Ո՞ կարէր իմանալ թէ ի տանէն Աքաթը կերակրին նոքա: Սակայն կերակրեաց զնոսա որ կերակրէ ի սկզբանէ մինչեւ ի կատարած զորդիս մարգարէսն, և զանասունս և զսուրբունս և զԹուրքունս երկնից: Իբրեւ ետ Աքաթը կոր ինչ ունէր՝ մարգարէիցն, սկսաւ գողանալ ի տանէն Աքաթը զի արկցէ շունչ ի մարգարէսն, և որ գողանալով գողանայր՝ պարտ էր զի համար տացէ ամենայնի: Մինչ կամէր հատուցանել զփոխս, վաղաղեաց վարեաց զնա մահ: Եկին ծառայաց տանն Աքաթը, և զի ոչ մնացին նորա ժառանգութիւն, զժառանգան ծառայս արարին: Մատուցեալ մայր նոցա առ Եղիշեայ և յեղեցոյց զգործս առն իւրոյ. զի ոչ զորդիս իւր կեցոյց փոխովք՝ այլ զմարգարէս կերակրեաց փոխովք: Այր իմ մեռաւ, ասէ, և դու գիտես զի երկուզած էր յԱստուծոյ, և աէր պարտուց եկեալ վարէ զերկուս որդիս իմ իբրեւ զծառայս. չէ արժան թէ ծառայեացէ զաւակ արդարոց՝ անօրինաց: Մի պատրանք կամ յերկուզէ լծեցին ի լուծն Բահաղու: Թէ պէտք և փոխ առ Աքաթը, այլ Աստուած եղև երաշխաւոր նմա, իբրեւ զանսուչ Աստուած՝ հատուց զպարտան Աստուծոյ: Ասէ ցնա. Բողովեա՛ աւմանս զգրացեաց և զգեղջեաց քոց,

և յորժամ լցցես զնոսա ջրով՝ աման մի լի հանցես առ իս: Եւ նա ընդ մի կողմն, և որդիք իւր ընդ մեկ կողմն: Ամենայն գետն զարմացեալ էին ընդ ունայն ամանոցն զորս ժողովեաց: Որ տեսինն զնա իբրեւ մերձեցան՝ չէին կարօտ հարցանելոյ. և որ ոչ տեսինն, յայնմանէ՝ զի ժողովէր զամանն՝ դիտացին: Ի ծուփս էր ամենայն դք, թէ իւր ընդ ուն զամանն, և իւր կարացէ հասուցանել զբաղում պարտան Աքաթի: Փոխեաց նա զջուրն յեղ, և փակեաց զգրուսն ընդգէմ իւր, զի մի լիցի նա այսպնեալ ի մարգարէից և ի քրմայն Բահաղու որ ժողովէին ի տեսիլ նորա:

Իբրեւ ելցի զամանն ջրով, եհան զմինն, որպէս առ պատուէր: Իբրեւ զմի ամանն արարեալ՝ յամենայն ամանն արկանել յղեաց զնա, արկ նա ի ջրոյն որ եղև եղ, յառաջնոյն յայլուն. և ոչ ջուրն զեղն փոխեաց, այլ եղն զջուրն այլագունեաց: Չամանն զոր եհան առ մարգարէն՝ նոյն ժամայն յեղ շրջեցաւ. և այն ամանն յորս նոյն արկ՝ ահա կային ի բնութեան: Իբրեւ արկ նա ի ջրով ամանն և ասէ ցորդիս իւր՝ մատուցէք ես, և իբրեւ ասացին թէ սպառեցան ամանքն՝ դարձան յեղ ամենայն ամանքն: Եւ զի փակեաց զգրուսն տան իւրոյ ընդ երեսաց ձաւանայ և ընուրն զջուրն, եբաց նա իբրեւ ի փառս՝ ի ժամու զի դարձան յեղ: Տեսին նշան և ետուն փառս Աստուծոյ ի վերայ երկոցունց զի փոխեաց զջուրն ի ձէթ, և հատուց պարտս ընդ Աքաթի: Եհան և վաճառեաց այրին և մեծատանց և աղբատանց: Եւ տունն Աքաթը առ գուրս նորա գային գնել էլ ի նմանէ: Աւելի քան զոր ինդրեաց նա ետ նմա Եղիշեայ. ինդրեաց զի հատուցէ զպարտս իւր, ետ նմա զի հատուցէ և կերակրեցի: Արար յանկարծակի մեծատուն, զոր ստացաւ նախ քան զամենայն:

Տեսէք որպէս հատուցանէ ստոյգն այնոցիկ՝ որ առնեն զողորմութիւն. զի ոչ միայն զոր ետուն տայ նոցա, այլ առաւել և աւելի տայ: Չի զամենայն զոր աստ տայ մեզ՝ ոչ համարի ի հանդերձեալն, զի այս ամենայն աւելորդ է, սոքեալ լինի որպէս ասաց:

ԿՅՈՒՐԴ ԻԲ.

Օրոնեալ է Տէրն ամենայնի, որ է հոգաբարձու ամենայնի

Դաւիթ թագաւոր և մարգարէ՝ զԱքիստիէլ հարցանէր. և զի իմաստուն էին խրատք նորա, եզ զնա մարգարէ՝ երկրորդ: Եւ ոչ զխրատ շոշայ անարգէր Դաւիթ և որդին նորա: Եւ զի մարգարէն լուաւ դոյզն մարդոյ, քանի՜ եւս լուրիցուք մարգարէին: Դանիէլ աբքային Բաբելոնի եղև խրատաւ բարի խրատու, զի քաւեաց զպարտիս արովք և քաւելով ի վերայ անանկաց: Եթէ նա որ կուրացոյց զԹագաւորսն, և սպառեաց զորդիս թագաւորաց, և չի ձիգ արար զտունս քաւութեան, և առ զսպաս պաշտամանն: Նա որ չարչարեաց զամենայն դք չար, և հպարտացաւ ի վերայ Տէառն ամենեցուն, և վաճառեցանքն անսպաս կերին երկրպագել ընդ նորա խորհեցաւ: Իսկ թէ մէկ այն անօրինի գոյհնար զի քաւեացէ ի ձեռն արոց՝ որպէս և խոստացաւ Դանիէլ հայրն հոգուց, ո՞ արհամարհեաց զարովք որ գայտաքի դորութիւնս ունին: Չի թէ նոքք կեայր, չէք անօրինութիւն որ սպառամբէ ի նոցանէ: Որ կարօտ ես թողութեան, սուրբ ողորմութեան են բժիշկ քո: Չնշեալ զմեզ քո զոր գործեցիք՝ ի ձեռն արոց զոր տացեալ ես: Բարի են քեզ սուրբ ողորմութեան: Ի նմանութիւն են մկրտութեան: Չի չէք քեզ հնար մկրտելոյ, գոյ հնար արգարտաւոյ արովք յայնմանէ զոր ետ քեզ Աստուած: Ի իր առաջի ծառայից նորա. փոքուն զոր տաս՝ օրհնի բաւութեամբ ինչ որ մնայ քեզ: Ոչ պահանջէ ի քեզ ընդ արարածոյ քոյ, և ոչ ընդ յղութեան և ծննդեան քո, և ոչ ընդ լուսոյ և ծծելոյ զօգ, և ոչ ընդ անարգանք և խաչի իւրոյ, ոչ արար զմեզ նոքք պարտապանս. քանզի չէ իսկ հնար թէ հատուցին: Չի որչափ յաճախեցուք արգարտացուք ընդ այսր ամենայնի, յոյժ սակաւ է: Իբրեւ զամենայն ինչ նա ետ մեզ, թէ տացուք նմա ի նորայոյն՝ գրէ զանձն իւր ընդ պարտապանս, զի դարձուցէ մեզ ընդ միոյ հարիւր: Փոխանակ այսր որ մնայ ի մեզ, տայ մեզ զայն որ ընդ մեզ երթայ: Փոխանակ այսր որ ոչ բռնինի, տայ մեզ զայն որ բռնինի: Ո՞ նիւթ որ ժամանակեան է, և շահ իւր յաւիտեանց: Աստ մնայ գլուխն, և վարձ նորա յղարկի ընդ մեզ: Պաշտանեայ է նա այսր կենաց,

և ոչ ի ջանէ ընդ մեզ ի դժոխս: Չի անձամբ իւրով ոչ յղարկի ընդ մեզ, արովք և հանգստեամբ ցրուեացուք զնա, սիրելիք, զի ցանկեացուք նոքա մտեցաք ի ժողովելն զնա: Եւ զի ոչ ստացաք նովաւ զարքայութիւնն մի երթիցուք նովաւ ի դժոխսն: Մի երթիցեն ընդ մեզ պարտք նորա, և մնացէ նա ի ձեռս այլոց: Չի զբաւեւեցանք արովք իւրովք քաւէր նա ի պարտեաց իւրոց. որ զբաղում պարտս թողու՞ զսակաւ պարտիս քանի՜ եւս թողցէ: Մինչդեռ գոյ ի ձեռս ձեր՝ ջնջեցէք նովաւ զպարտս ձեր:

ԿՅՈՒՐԴ ԻԳ.

Օրոնեալ է Որդոյն օծելոյ որ կերակրէ ամենայն յիւրմէ

Հրեշտակք, որ ոչ կերակրին՝ ոչ խափանին յօրհնութեան: Մեր զի լցաւ կարօտութիւն գոհացուք զնմանէ զի յապեցաք: Թէ հրեշտակք գոհանան՝ որ ոչ թշխատեն զարարածս որ պաշտեն, արարածք զնորդ լուսեցեն յօրհնութեան: Յամենայն ժամու թէ դատարկ դք է, յայսմ ժամու չէ օրէն խափանել: Եթէ մինչ քաղցեալն էաք օրհնեցաք, քանի՜ եւս այժմ զի յապեցաք: Յաւուր պատարագի քո մի տար անկի մարդոյ արնջել զքեզ. զի եղանէ արտունջ նորա և ապախտանէ զպատարագն քո: Չի գոհանան զքեզ աղբատք գոհացին զքեզ և պանդուխտք: Մի առնուր դու յաղբատանց, և տացես զայն տուր ուրոյ: Չի մարգ համարեցի զայն քեզ Տէր քո, զի ոչ է քու մեկ ետուր դու: Եթէ այլոց է սուրբ քո՝ ում դարձցի վարձ ընդ այնորիկ: Տուք ի ձեռքէ, մեծատունք, զի ձեզ համարեցի զայն Աստուած: Մի առնուր բարի յընչեց անանկաց, և փառաւորեցին այնու որ ոչ քո է: Չի նշեալ հարկ առնուր յաղբատն և տալ միւս սուր աղբատն. զմին քաղցեցուցէր, և զմին լցուցէր, և ուր է անդարգարութիւն քո: Բարիք առնես զի կերակրես զաղբատն, բայց գուցէ զմեծատունս աղբատն առնիցես: Չի չէ մոռացեալ ամենապիտին թէ ուստի է Բողովեալ պատարագն քո: Ո՞չ, որ զգեցուցանես զաղբատն, գուցէ մորթիցես զմորթ անանկաց: Որ տաս հաց քաղցելոց, մի թլփատեցես զինչս կարօտեաց: Որ հոգաբարձուք ես աղբատանց, մի անփոյթ առնէր զանանկաց քոց: Ահա

աղբատք այդ են ընդ քեզ՝ հանգո՞ զանձնս բնակեցաց քոց: Չի նշեալ հարկ և տալ արտաքնոց, իբրեւ ահա կարօտեալք են ի տան քուսմ. մի հոգար զարտաքնոց և անփոյթ առնիցես զնեքնոց: Մի օրհնեցեն զքեզ արտաքնոց և անիծանիցեն նեքնոց: Մի ժողովէր արտաքնուս երանութիւն և ի ներքուս վայ դառնութեան: Նախ ի ծառայս քո արգարացիր, և յորժամ լցցես զպէտս նոցա՝ կատարես ջիր և արտաքնովքն:

Յոք՝ որ ի վերայ ծնագոյ իւրոց սընջ զորքս, այսպէս ասէ. Թէ անարգեցի երբեք զգառատանս ծառայից իմոց յամենայն իրս՝ յորս դատեցան ընդ իս: Ո՞ որ լինիցի նմանող արովք՝ նմանեցի նմա և քաղցրութեամբ իւրով: Լցուցէ զքաղցրութիւն արտաքնոց, և հանգուցէ զգոհարիս նեքնոց:

ԿՅՈՒՐԴ ԻԴ.

Օրոնեալ որ կերակրէ ի մեծաբնէ կերակրէ ամենայն քաղցեալս երկրի

Չանձն իւր հրաւիրեաց առ Չակքէ Տէր մեր, իբրեւ ետես զմիտս նորա՝ զի ծարաւ էր օտարանալ ի մեղաց և յագահութեան իւրմէ: Ի մտանել Տէառն ի տան նորա՝ բնակեցաւ սեր ի սրտի նորա: Մերկացաւ միանգամ ի սրտի նորա, ի յափշտակելոյ մայն յամենայնէ, ի յափշտակելոյ և ի ժառանգելոյ: Դատեաց զանձն իւր յօրինաց, և չորեքին դարձոյց զյափշտակեալն. և յաւել եւս յօրինացն ի բաշխել զկէս ընչից իւրոց: Նախ կատարեաց զստուգութիւնն, և ապա սկսաւ յողորմութիւն: Հատուց նախ զոր պարտ էր, և ապա ետ փոխորդաց: Ի դարձուցանել զամենայն զոր զրկեաց՝ զպարտս իւր հատուցանէր. և ի բաշխել զկէս ընչից իւրոց՝ փոխ տայր Աստուծոյ ընչից իւրոց: Ո՞ պարտապան, որ յանկարծակի եղև պարտատէր: Հատուց մարգարէս եղև պարտատէր: Աստուծոյ փոխ չինն մեղաւոր՝ որ կարգաց առ նա: Մեծ ճաշ փարսեցոյն ծանու ընչիւ՝ եկաց ի բաց. արտատուցն ետ քաւութիւն, և նա ընկալաւ յանդիմանութիւն: Անարգեաց զեղան փարսեցոյն՝ զի ետես այսպնեութիւն ի միտս նորա: Եւս քաւութիւն այնմ որ մեղաւ, զի ետես զեղլ ի խորհուրդս նորա, այսպնեութիւն փարսեցոյն՝ ոչ ինչ վնաս...

Իւրեանց: Չարմանք տեսանել էր ի տան Չակքէին զյափշտակեալսն զայնս, և զաղբատ յափշտակեալքն առին զստացուածս իւրեանց, և աղբատն մերկէք՝ և զգեցան, և բոկք՝ ելին ագուցեալք. քաղցեալք՝ լցան և նշխարեցին, և կարօտեալք՝ պարկս բարձին: Ետ ծառայից զաղբատութիւն, և պարտապանաց զգիր իւրեանց: Ետ և վարձս ընդ զրկանաց եկաց և պանդխտաց: Մեծ զարմանք գործեցան փոփոխմամբն որ եղև անդ. զի աւարողն եղև աւարեալ, և յափշտակողն՝ յափշտակեալ, իբրեւ նոյն էր՝ և չէր նոյն: Նա զի այլապէս կերակրեաց յառաջին այսպնեանէն. զի այր որ զրկէր զամենայն ոք՝ զիւրն եւս սկսաւ տալ այլոց: Յափշտակեալքն որք առին՝ գոհանային, և Չակքէ ուրախ էր ի տալն իւրում: Յառողաց և ի սուտողաց՝ էլ անդ օրհնութիւն Որդոյն օծելոյ:

Այս են հանգիստք ճշմարիտք՝ որ սոքօք հաշտի Աստուած, որ հանգուցանէ զծառայս և զաղբատն, և զպարտապանս հանդերձ աղբատովք: Ի հանգստեանն Չակքէի ամենայն ուրեք լի էր գոհութեամբ բերան իւր: Մի հանգուցուք զանձնս սակաւուց, և ցաւեցուցուք զսիրտս բազմաց:

ԿՅՈՒՐԴ ԻԵ.

Օրոնեալ է կերակրի ամենայնի ի քաղցելոց, որք լցան եւ եղևարեցին

Չի ուրախ եղև Չակքէն որ ետ նմա քաւութիւն մեղաց, կեանս բնակեցոյց ի տան նորա. որդի Աքաթը ժամու գրեաց զնա: Փարսեցին կոչեաց և անարգեաց զնա. ոչ ետ նմա յայսցանէ: Եմուտ և առ քաւութիւն չինն մեղաւոր՝ որ կարգաց առ նա: Մեծ ճաշ փարսեցոյն ծանու ընչիւ՝ եկաց ի բաց. արտատուցն ետ քաւութիւն, և նա ընկալաւ յանդիմանութիւն: Անարգեաց զեղան փարսեցոյն՝ զի ետես այսպնեութիւն ի միտս նորա: Եւս քաւութիւն այնմ որ մեղաւ, զի ետես զեղլ ի խորհուրդս նորա, այսպնեութիւն փարսեցոյն՝ ոչ ինչ վնաս...:

\* Աստ պակասէ մի թողով՝ որ առնէ բոս օրինակին ձը սոդոս բանից. ընդ որս է և զխաղարկութիւն իւր կրթիւն:

ԿՅՈՒՐԴ ԺԷ.

Օրմենայ է որ ի հինգ նկանակին յագեցոյց հազարս բազումս

Որ քննես զճնունդ Որդւոյ, պատմեալ զպարգեւէ նորա, թէ զհարգ ի հինգ նկանակէ յագեցան հազարք բազումք: Օրմենայ որ ի հինգ նկանակէ յագեցոյց հազարս բազումս: Ի հինգ նկանակէն յագեցան, եթէ նկանակքն նկանակս ծնան: Եւ զհարգ ծնան նկանակքն այն՝ առանց յուրթեան և ամուսնութեան: Օրմենայ ծնան ձեռացն՝ որ ի նոսա յղացան նկանակքն զմիմեանս: Հինգ նկանակքն այն ծնան բերս և հազարս նկանակաց. զորս մանուկն բարձեալ ունէր, լցաւ ի նմանէ բնաւ անպատն: Եւ որք ի դասառակի ծրարեալ էին՝ երկուսան սակառի նըշխարեցին:

Ասացէ քննողն, զհարգ ծնան նկանակքն զմիմեանս: Ո՞ր էա աճումն նկանակացն՝ որ ամուսն էին բնութեամբ իւրեանց: Եւ զի նկանակքն զմիմեանս ծնան առանց ամուսնանալոյ և սրբապէս, ո՞ր բաժանեցի ի ծնողենէ սուրբ անդրանկանն Մարտուն: Ան Տէրն մեր զհինգ նկանակն, և անդրէն իբրեւ հայեցաւ յերկինս՝ եռացին նկանակքն ի ձեռս նորա. և զարմանք կալան զաշակերտան նորա: Չի հինգ էին՝ ամենայն ոք գիտէր, և եթէ զհարգ բազմացան զայն ոչ ոք գիտէր: Առաքեալքն կրէին ի ձեռաց նորա. ոչ էթէ երկուսանքն միայն կրէին զհացն ի ձեռաց նորա, այլ և եւթմաստուն և երկուքն կրէին հաց հազարաց մարդկան: Չի էթէ և ամենայն ժողովրդրդեանն կրեալ էր հաց ի ձեռաց նորա, պարտէին ի բազմութենէն զոր կուտողեր արարչութիւնն նորա: Եւ իբրեւ մատաւ Դմաւոն, կարծեաց թէ իւր եւեթ բաւական գուցէ: Անդ լի բազմութիւն իւրովք առնոյր՝ և ի ձեռաց նորա ոչ պակասէր: Առաջի բազմականացն բազմանայր, և ի վերայ ձեռաց նորա աճէին, և ի բազկէ Որդւոյ օժեղոյ ո՞ր է որ ասացէ՝ թէ քանի աճէր:

Հազարք հիւանդաց և անտաժէտք էին յամենայն կողմանց: Յետ բժշկելոյ զանոս նոցա՝ յագեցոյց զբաղցութիւնս նոցա: Առաքեալութիւնս առանց թուոյ, ի հիւանդս առանց համարոյ՝ արար նա ի ժողովուրդն յայն: Եւ յետ քննելոյ առուս բրիս՝ ասար արար սքանչելիս, որում վրկայեաց ժողովուրդն ամենայն: Յամենայն ումեքէ փառաւորեցաւ, զի

ամենայն ոք լցեալ յագեցաւ: Անոյշ էր հաց անապատին՝ իբրեւ զմանանայն յանապատին: Մանանայն՝ այգուց ապականէր, և նա որչափ ընդերկարէր՝ անոյշանայր: Սակաւ էր հացն որ նշխարեցին, զի երկուսան սակառի նշխարեցին: Յոյժ էր հացն զոր կերան, և առաւել էա զոր նըպարակն բարձին: Ոչ ունէին որովայնք նոցա՝ որչափ ունէին շաւակք նոցա: Յորովայն չափով բարձին, և առանց չափոյ՝ ի շաւակս իւրեանց: Յագեցան, նպարակեցին և նշխարեցին: Եւ որ ոչ ոք էր որ առնոյր՝ ժողովեաց յանապատին, զի մի կուրիցէ նշխար օրհնեալ հացին:

Ք Օրմենայց Տէր զյարկս ձեր յողովեց երկրպագուաց իւրոց: Չի զսուրբն ուրախ արարէք՝ ուրախ լիջիք ընդ հրեշտակս նորա:

ԿՅՈՒՐԴ ԼԸ.

Օրմենայ է որ կերակրէ զամենայն շունչ իբր զհազարս սևապատին

Ժողովեցան յամենայն աղբաց յանապատն առ Փրկիչն մեր: Ինն ի նոսա արտաժէտք, և հասածք, և կոյրք, և խուլք, և բորոտք: Յաւուրն առաջնում ակն ունէին, թէ ի նմա բժշկէ զցաւս նոցա: Անց պարզեցաւ օրն առաջին՝ և կայր ժողովուրդն յարատս իւր: Յաւուրն երկրորդի ակն ունէին՝ թէ ի նմա բժշկէ և արձակէ զնոսա: Կատարեցաւ օրն երկրորդ՝ և ոչ արձակեաց, զի չէին բժշկեալք: Ժուժեցին կոյրքն և բորոտքն, և որ ունէին զդեւան, և կայցին մնացին: Եւ իբրեւ փակեալ էր ընդդէմ ամենեցունց՝ ոչ ոք փոխեցաւ առ ի նմանէ: Չի էթէ բժշկեալ էր զսակաւս՝ արգելութիւն սակաւքն զբազմամն: Եւ թնիցս յաւուր մերձեցան առ նա ցաւածքն՝ և ոչ բժշկեաց զնոսա: Յաւուրն առաջնում և երկրորդի սերմանեաց ի նոսա վարդապետութիւնս. զի իբրեւ բժշկեաց զմիտս նոցա՝ ոչ լացուցէ և զմարմինս նոցա: Եւ օրէն իսկ էր, զի յառաջագոյն տացէ զմեծ բժշկութիւնն, զի մեծ է հոգի քան զմարմին: Ի բժշկութեան ոգոց վատակոց, պաշար որ եկն ընդ մարդկանն՝ սպառեցաւ յաւուրն երկուս: Կրկնեցաւ վիշալ ի սարակէ նոցա: Երկուք մահու կալաւ զնոսա. և թէ մնացին՝ ոչ բժշկին, և դառնալ յօթեանս իւրեանց՝ չգոյր զօրութիւն յոսս նոցա: Տեւեցին յօրն երրորդ, յայտ սպաստան՝ թէ

բժշկին: Անցին ժամք մետասան, և զոր ի նոցանէ ոչ բժշկեաց: Ունէին կանայք զսիրելիս իւրեանց, և զանգամաւոյնս հանդերձ կաղիւք: Մի կին տանէր զեղբայր իւր գօս, և միւսն ձգէր զհայր իւր կոյր: Արեգակն ի մտանէլ մերձեալ էր, և կային ամենեքեան յաշտիճան մահու: Կրկնեցաւ վիշալ հիւանդաց նոցա, և յողորկեաց սով զառողջս նոցա: Յամիտիւ արեգակն զճառագայթս իւր՝ վայ կոչէին անձանց իւրեանց: Չի հիւանդքն ի ցաւս կաշկանդեալ էին, և առողջքն քաղցիւ կապեալ էին: Ի ժողովել արեգակն զծայրս իւր՝ ծագեցին նոցա ողորմութիւնք: Չի էա զբժշկութիւն զոր ինդրեցին, հանդերձ յագմամբն՝ զոր ոչ ինդրեցին: Յետ առնելոյ զհանդէս նոցա զճշմարտեաց այն և զկեղծաւորաց, սփռեաց ըզգուրթ իւր զամենայնիւ: Չի զրկեցողքն և հատուցանողքն՝ յաշտակերտացն ուսանէր որ ինչ յայտ էր ի սրբոցն նորա: Վկայս կամեցաւ աննէլ զնոսա հացին որ պակասեաց ի ժողովրդենէն: Տէր որ գիտէր, թէ զոր քանչելիս հանդերձեալ էր կատարել, անդ ակնարկեալ նորա՝ յաճախեաց զհացն: Ոչ հրամայեաց մալ առաջնոյն, այլ ամ զինի և զայլն:

Երայն մեր էհարց զառաքեալն՝ թէ քանի նկանակս ունիք առ ձեզ. զի յայնեացէ թէ պակասեաց հաց յաղբատաց և ի մեծատանց: Ըզլիութիւնն էա նախ արդեօք, եթէ զառողջութիւնն յառաջ քան ըզլիութիւնն: Չբժշկութիւնն էա յառաջագոյն, եթէ ուրախ արար նախ զհիւանդս ի յագմամն: Բազմեցան յանայք սուրբք՝ ընդ բորոտան, որք ի նմին ժամու առին զսրբութիւն: Բացեալ էին աչք կուրաց՝ և հայեցին ի ծաղիկս և ի խոտս: Ոչ ընդ կոյրս պղուցեալ էին, և նոքա ընդ գեղ արարածոցս: Կատէր անդրանիկ առ մօր իւրում անդամաւոյժ, իբրեւ ճիւղեալ էր ընդ զորովայնն՝ և ցուցանել զընթացս ոտից իւրոց զոր ստացաւ: Յարեան և մեկնեցան ի Տեառնէ ժողովք ժողովք ի բազարս իւրեանց. և որք պէսպէս ցաւօք եկին առ նա՝ մեկնեցան ի նմանէ առողջութեամբ: Մեծ զարմանք եղին անդ, զի մի յագումն էա ամենեցուն: Եւ պաշար ամենայնի՝ և առողջութիւն ամենեցունց: Եթող կոյր զառաջնորդ իւր, և անդամաւոյժ՝ զայն որ կրէր զնա: Կաղք՝ ընկեցին

զցուս իւրեանց յառողջութեան՝ զոր ստացան ոտք նոցա:

Օրմենայ յայնմ՝ որ յագեցոյց և բժշկեաց զժողովն յանապատի, զի ըստ նմին օրինակի բժշկէ և կերակրէ զամենայն մարդիկ որ ընդ ակնդէրս:

ԿՅՈՒՐԴ ԼԹ.

Օրմենայ որ կերակրէ ողորմութեամբ իւրով զայնարմս՝ զոր հաստանեաց գրորեալք

Յաւուր յորում կենդանացաւ Տէր մեր Քրիստոս, և լուծաւ գողութիւն աշակերտացն, ասէ Դմաւոն յառաքեալն, եթէ՛ Երթայց որսացից ձուկն: Յարեան ընկերքն՝ գնացին ընդ նմա, իբրեւ յորս և ի զբօսանս, զի թափեցին ի արամութենէ և բերցին զօրագայտի առուրն: Չգիշերն ամենայն աշխատեցան՝ և յուրանն ոչ եմուտ ձուկն: Չի արամեցոյց զնոսա ծովն՝ Տէր ծովուն ուրախ արար զնոսա: Ի ժամու իբրեւ խափանեցաւ որսն՝ պատահեաց նոցա որս յոյժ: Իբրեւ Լքան ձեռք նոցա՝ գտին նոքա որս, և զՈրդի: Եւ թէ մինչ ընդ նոսայն էր Փրկիչն մեր, և բժշկէր զամենայն ցաւս, կարօտեալք էին ի հաց, և հասի ի քաղցի փրկեցին և կերան, այսօր զհարգ ոչ՝ որք միայն մնացին ի նմանէ և ի զօրութեանց նորա: Չի մինչ ընդ նոսայն էր՝ քաղցնութիւն, քանի՛ էա քաղցնութիւն առանց նորա: Չի առանց որսոյ և առանց հացի էին նոքա յայնմ առուր, և էա Տէր մեր զերկուսին՝ կարօտեցին յերկոցունց: Եւ յաւել Տէրն երկոցունց՝ զառաւելն քան զերկուսին. զի զՈրդին Տեառն ամենայնի գտին անդ: Նմանեցոյց զանձն գոյզն ումեք, զի ինդրեցէ զհաց ի քաղցեցոյն. ուտել ինչ՝ ասէ կերակրէն ամենայնի: Եւ զի յայնմանէ ոչ ծանեան զնա, և էա զնոսա զի արամեալ էին, և ասէ, թէ՛ Յալմէ նաւիք ընկեցէք՝ և աշա գտանէք: Ընկեցին զուրկանն, և գտին որս յոյժ: Ընդ որսոյն՝ խորհել սկսան, թէ ով է այն՝ որ իբրեւ ի ցամաքի է, էա ձուկն ձուկն ի մէջ ծովուն ժողովեալ: Չի ժողովէն ընդ ալմէ նաւին: Եթէ էա զնոսա՝ զարմացումն և եթէ նա ժողովեաց զնոսա, ով է նա որում լուան ձկուկն: Կարծել թէ Որդին եցէ, ոչ նման էր բարբառով և ոչ տեսեալք: Եւ եթէ չէ նա՝ ով եցէ, զի ընդ բանի նորա եղին արգիւնքն: Ծանեալ զնա Յովհաննէս և ասէ ցԴմաւոն՝ թէ Տէր է այն:

ԿՅՈՒՐԴ Խ.

Օրմենայ որ կերպ ընդ աշակերտան, զի ցուցցէ քի մարմին զգեցաւ

Չի էա Տէր զաշակերտան իւր թէ աշխատեալք և քաղցրեալք էին, պատրաստեաց Տէրն ծառայից իւրոց ճաշ: Մինչէ և եկեալ նոցա՝ ելին գտին առաջի նորա հաց և ձուկն

արկեալ զկայծակաւք: Ասէ ցնոսա. Եկայք ճաշեցէք՝ զի օր է Պենտա. կոտակեց: Այս անգր եղին միաք նոցա, թէ ուտաի է հացս այս և ձուկնս: Չի յանապատին՝ աճելով աճեաց, և աստ՝ հաստատելով հաստատեցաւ: Չի յանապատի անդ՝ յընչէ եղին, և աստ յոչընչէ հաստատեցան: Չի յաճախեցունեալ տեսին զնա, ոչ տեսին իբրեւ հաստակն: Ի ձկանեղ որ որսացայք՝ խոտաւ, նա՞ արդեօք եցէ, թէ ոչ եցէ նա: Ոչ ասաց, թէ՛ գուր էս Տէր, հրամայեալ ինչ գալ առ քեզ. զի երկեալ նա՞ թէ գուցէ փորձութիւն պատահեցէ նմա իբրեւ զառաջինն: Կտաւ ամ ընդ մէջ զքեստ՝ մինչ ի Կտաւ ամ ընդ էր: Եւ իբրեւ էլ նա՞ ջուր անդր էր: Եւ իբրեւ էլ նա՞ զհարգ արդեօք մերձեցաւ առ Տէր իւր. երկուսիւմ մեծաւ՝ իբրեւ զԱմբարին, եթէ միամտութեամբ որպէս Մարիամ: Ի բերան էա արդեօք ողջոյն, թէ առ ոտն անկաւ և եպագ ողջոյն, թէ առ արդեօք յայնժամ երկիր: Ասաց ինչ արդեօք յայնժամ Դմաւոն, թէ լուրթիւն պատահեաց ի ժամուն: Աղաչեաց վասն ուրանալոյն զնա, թէ չէր ժամ աղաչելոյ մեաց վասն մահուն և յարութեան զնա: Եհարց զնա Դմաւոն զի պատմեցէ վասն մահուն և յարութեան ի ձեռս նորա: Ոչ յարմարանա իւր: Երկուսն ոչ ի կերպարանս իւր: Ելին աշակերտքն և տեսին հաց և կայծակուն և ձուկն ի վերայ նոքա: Եհարց զնա Դմաւոն զի պատմեացէ զնոսա հաստատութիւն իւր: Իբրեւ հերձին, և լուացին և խորովեցին հաղորդեցին ընդ նմա հացին: Չի հատոյց նոցա մինչէ և եկեալ էին, հատուցին նոքա յետ գալոյն: Չոր ինչ խոտացաւ նա ի վախճանի առնէլ երկուսանիցն, կանխեաց արար նա զայն աստ, զի այն ընդ այն երաշխաւորեցին: Չի խոտացաւ նա ուտել իւր առ սեղան արքայութեան. և զոր չէր խոտացեալ արար, զի առաւել ստուգեցի խոտացեալն: Եկայք ճաշեցէք ասէր Աստուած ցձկնորսան: Բազմեցին քաղցեալքն և ի մէջ նոցա կերակրէն քաղցեցոյ բազմեալ: Սրբէք զարհուրէին ի նմանէ, և գուցէ քաղցրեալն ստուգեալ. և որդեք հոյոյ բազմեալ ընդ նմա նախ քան զօրն: Չի բազմին ընդ նմա՝ թէ հարցանիցն վասն հացին, և վասն հոյոյն, և վասն ձրկանն: Գիտէին՝ թէ որ բռնադատեաց զձկուկնս որ ցրուեալ էին ի մէջ ծովուն, զի ժողովեցի բազմութիւնն ի մէջ փոքր գոգոյ ուրկանին, նա հրամայեաց հացի և հոյոյ և ձկանն՝ և եղին յանկարծ: Չի եցոյց նոցա զԱստուածութիւն իւր որսովն այն\* :.....

\* «Երկուսն խորհելով պակասել աստ»:

